

Մրցույթի հայտարարություն
ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» պետական ոչ
առևտրային կազմակերպության
տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար

ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված՝ պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման) կարգի 6-րդ և 7-րդ կետերի համաձայն՝ ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝

1) ՀՀ քաղաքացիությունը.

2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):

2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝

1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.

2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.

3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.

4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.

5) ինքնակենսագրություն:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում՝ 2021 թվականի մարտի 12-ից մինչև ապրիլի 1-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00 -ից մինչև ժամը 15:00-ն, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2021 թվականի ապրիլի 15-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի «Ալվանքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ –ում, գ. Ալվանք, փողոց 3, շենք16 :

Տեղեկությունների համար դիմել հեռ. 093 08 96 97, Էլ.փոստ
asryan.armenuhi@mail.ru